**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2**

**ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/15-ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

**ք. Երևան** **18 հունիսի 2026թ.**

2026թ. հունիսի 5-ից 18-ը, ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում տեղի ունեցավ ամենագնաց մեքենաների ձեռքբերման թիվ ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃԱՊՁԲ-26/15-ԱՎՏՈՄԵՔԵՆԱ ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը:

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

Վ. Ֆարսյանը՝ ՀՀ ԱԱԾ ՏնտՎ պետը,
Հ. Գրիգորյանը՝ ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը,
Դ. Բորյանը՝ ՀՀ ԱԱԾ ՏնտՎ աշխատակիցը:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Վ. Ֆարսյանը, որին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար, «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Վ. Էլոյանը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է երեք անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով նախատեսված Հավելված 1-ով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» (այսուհետ՝ Կարգ) 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջը համարվում է պահպանված, իսկ նիստն իրավազոր, ինչով պայմանավորված Հանձնաժողովի նիստը հայտարարվեց բացված:

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ**

1. Գնման հայտով սահմանված՝ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների, աճուրդի առաջարկված մեկնարկային գների և այլ անհրաժեշտ տեղեկությունների մասին:
2. Ընթացակարգին հայտ ներկայացված մասնակիցների և ներկայացված հայտերը գնահատելու մասին:
3. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
4. Ընտրված և այդպիսին չճանաչված մասնակիցներ որոշելու մասին:
5. Համակարգի միջոցով գեներացված հայտարարություն/ներ/ի և անգործության ժամանակահատված կիրառելու կամ չկիրառելու մասին:
6. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների եվ հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

7. Պայմանագրի նախագիծը հաստատելու մասին:

## 1. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ, ԱՃՈՒՐԴԻ ԱՌԱՋԱՐԿՎԱԾ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳՆԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 5-ին, ՀՀ, ք. Երևան, Նալբանդյան 104 հասցեում գտնվող ՀՀ ազգային անվտանգության ծառայության շենքում ժամը 09:30-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման առարկաների վերաբերյալ հետևյալ տեղեկատվությունը.

ՀՀ դրամ

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Աճուրդի մեկնարկային գին | Մեկնարկ | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|---|---|
| 1 | ամենագնաց մեքենաներ | 26750000 | 08.06.2026 09:30 | 39000000 |
| 2 | ամենագնաց մեքենաներ | 38700000 | 08.06.2026 09:30 | 39000000 |

Ընթացակարգի հայտերի ներկայացումն ու բացումը, ինչպես նաև՝ հակադարձ աճուրդի անցկացումը նախատեսված էր https://eauction.armeps.am/ կայքի միջոցով՝ հրավերով և համակարգով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՄԵՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև Մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցե | Հեռախոսահամար | Էլ. փոստ | ՀՎՀՀ |
|---|---|---|---|---|---|
| 1 | «ԱՎՏՈ ԳԵԼԼՐԻ» ՓԲԸ | ՀՀ ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղմ 46/5 | +37460707010 | geverg.gevorgyan@auto-gallery.am | 02889819 |
| 2 | «ԻՎԻ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | ՀՀ, Կոտայքի մարզ, Վերին Պտղնի, 5-րդ փողոց, 5-րդ փակուղի, 1 | +37495888895 | sales@evmotors.am | 00215691 |
| 3 | «Մուրան» ՍՊԸ | ՀՀ,ք.Երևան,Աճառյան 42 | +37499109103 | arman.tadevosyan@autogroup.am | 00084235 |

2026թ. հունիսի 11-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ համակարգի միջոցով գնահատման մեջ ներառված.

1. Հայտերը կազմվել և ներկայացվել են Ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան.

2. Ներկայացված հայտերում առկա են Ընթացակարգի հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը.

3. Ներկայացված հայտերում ներառված փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերով սահմանված վավերապայմաններին, բացառությամբ.

- «ԱՎՏՈ ԳԵԼԼՐԻ» ՓԲԸ-ի կողմից հայտով ներկայացված.

1. Ընթացակարգի հրավերով սահմանված և պահանջվող իրական շահառուների մասին տեղեկատվությունը պարունակող փաստաթղթում, համաձայն՝ Ընթացակարգի հրավերի հավելված 1.3-ի, լրացված չէ Ընթացակարգի ծածկագիրը,

2. 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա են բազմաթիվ անհամապատասխանություններ՝ Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի նկատմամբ, մասնավորապես՝ չեն համապատասխանում ավտոմեքենայի երկարությունը, լայնությունը, բեռնատարածքի չափսերը, շարժիչի հզորությունը, անիվների և անվահեծերի չափսերը, նստարանների պատվածքը, ներկայացված չեն կամ թերի են ներկայացված տեղեկություններ հետևյալ համալրվածությունների մասով՝ էկոլոգիական դասը՝ EURO 5, մխոցների քանակը՝ 4, բեռնախցիկը պետք է ունենա մեքենայի տանիքի բարձրության կոշտ ծածկ և ներսի կողմից վնասվածքներից պաշտպանող շերտ, օդի ճնշման հսկման համակարգ, մոնիտոր, ետին տեսարանի տեսախցիկ, էլեկտրակառավարվող ապակիներ, լուսարձակների էլեկտրական կարգավորում, էլեկտրակառավարվող և տաքացվող կողային հայելիներ, կենտրոնական փական՝ հեռակառավարմամբ, իմմոբիլայզեր, ոտնահենակներ, ավտոմեքենայի հետևի հատվածի ապակիները՝ մգեցված, առջևի և հետևի շարքերի գորգեր, ամբողջական պահեստային անվադող, արտադրությունը՝ 2026թ., առավելագույն վազքը 1000 կմ:

Անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագիրը և ներկայացնել համակարգի միջոցով:

- «Մուրան» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված 2-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում ներկայացված ավտոմեքենայի տեխնիկական բնութագրում անհրաժեշտ է հստակեցնել առաջարկվող ավտոմեքենաների գույները:

Անհրաժեշտ է հստակեցնել տեխնիկական բնութագիրը և ներկայացնել համակարգի միջոցով:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2026թ. հունիսի 11-ին Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած Մասնակիցների նախնական և վերջնական գնային առաջարկները.

Ներկայացված գնային առաջարկների և Մասնակիցների՝ ընտրված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

ՀՀ դրամ

| Հ/Հ | Ներկայացված հայտեր | Նախահաշվային գին | Նախնական առաջարկ | | | Վերջին առաջարկ | | | Կարգավիճակ /լրացվում է հայտերի գնահատման վերջնարդյունքում/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | Ընտրված մասնակից «X» |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | «ԱՎՏՈ ԳԵԼԼՐԻ» ՓԲԸ | 39000000 | 26750000 | 20% | 32100000 | 26750000 | 20% | 32100000 | **Գնահատվել է անբավարար և մերժվել է** |
| 1 | «ԻՎԻ ՄՈԹՈՐՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ | 39000000 | 32432499 | 20% | 38918998.8 | 32432499 | 20% | 38918998.8 | |
| 2 | «Մուրան» ՍՊԸ | 39000000 | 38700000 | 0% | 38700000 | 38700000 | 0% | 38700000 | X |

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

2026թ. հունիսի 11-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. Նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և առաջարկել Մասնակից/ներ/ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել շտկման ենթակա արձանագրված անհամապատասխանությունը՝ հիմք ընդունելով Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 15-ին Հանձնաժողովն արձանագրեց, որ.

1. Մասնակից/ներ/ի կողմից սահմանված ժամկետներում ներկայացվել են հանձնաժողովի կողմից արձանագրված թերությունների շտկված տարբերակները, բացառությամբ՝ «ԱՎՏՈ ԳԵԼԼՐԻ» ՓԲԸ-ի, ում կողմից ներկայացված արձանագրված թերությունները շտկվել են մասամբ, մասնավորապես՝ 1-ին չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում առկա են բազմաթիվ անհամապատասխանություններ՝ Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի նկատմամբ, մասնավորապես՝ չեն համապատասխանում ավտոմեքենայի երկարությունը, լայնությունը, քաշը, անիվային բազան, բեռնախցիկի երկարությունը, բարձրությունը, շարժիչի ծավալը, հզորությունը, վառելիքի բաքի տարողությունը:

Կողմ՝ 3, դեմ ՝ 0:

2026թ. հունիսի 18-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ընդունել ի գիտություն ներկայացված տեղեկատվությունը:

2. «ԱՎՏՈ ԳԵԼԼՐԻ» ՓԲԸ-ի կողմից ներկայացված հայտը գնահատել անբավարար և մերժել, հիմք ընդունելով Ընթացակարգի հրավերի առաջին մասի 8-րդ կետի 8.11 սահմանված, ինչպես նաև Կարգի 42-րդ կետով սահմանված պահանջները:

3. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով սահմանված պահանջները իրագործելու նպատակով դիմել Պատվիրատուի ղեկավարին, իսկ նշյալ կետն իրագործելու անհնարինության դեպքում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջների համաձայն նախաձեռնել գործընթաց՝ «ԱՎՏՈ ԳԵԼԼՐԻ» ՓԲԸ-ին

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

4. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի և Ընթացակարգի հրավերի առաջին մասի 8-րդ կետի 8.11 ենթակետի պահանջներով Ընթացակարգը 1-ին չափաբաժնի մասով հայտարարել չկայացած:

5. Համակարգի կողմից գնահատման մեջ ներառված հայտերի գնահատման թերթիկը լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին:

6. Հիմք ընդունելով գնահատման թերթիկը՝ հաստատել գնահատման հետևյալ արդյունքները.

| Չ/Հ | Գնահատման մեջ ներառված մասնակցի անվանումը* | Գնահատման արդյունքը |
|---|---|---|
| 1-ին | «ԱՎՏՈ ԳԵԼԼՐԻ» ՓԲԸ | անբավարար |
| 2-րդ | «Մուրան» ՍՊԸ | բավարար |

*Գնահատվում են միայն մասնակիցների կողմից ներկայացված այն հայտերը, որոնք համակարգի կողմից ներառվել են գնահատման ենթակա հայտերի մեջ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 4. ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ԱՅԴՊԻՍԻՆ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով վերոնշյալը, 2026թ. հունիսի 18-ին Հանձնաժողովը որոշեց, Ընթացակարգի յուրաքանչյուր չափաբաժնի մասով որպես ընտրված և այդպիսին չճանաչված մասնակից հայտարարել սույն արձանագրության 3-րդ կետով ներկայացված աղյուսակում նշված՝ հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած Մասնակիցների թվից այն մասնակիցներին, ովքեր ներկայացրել են նվազագույն գնային առաջարկ:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 5. ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԻՋՈՑՈՎ ԳԵՆԵՐԱՑՎԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐ/Ի ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԿԱՄ ՉԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Վ. Էլոյանը ներկայացրեց գնահատող հանձնաժողովի կողմից իրականացված գնահատումների արդյունքում՝ համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:

2026թ. հունիսի 18-ին Հանձնաժողովը որոշեց.

1. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով անգործության ժամկետ սահմանել Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2. Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի պահանջներով Ընթացակարգի Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով անգործության ժամկետ չկիրառել:

3. Հաստատել համակարգի կողմից տրամադրված հայտարարություն/ներ/ի տեքստ/եր/ը:
Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 6. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ տեղի չեն ունեցել:

2. Գնման ընթացակարգի շրջանակում 2026 թվականի մայիսի 26-ին ներկայացվել է հարցում, որի մասով 2026 թվականի մայիսի 29-ին տրվել է պարզաբանում:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

## 7. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղարը Հանձնաժողովի անդամներին ներկայացրեց համակարգի կողմից տրամադրված պայմանագրերի նախագծերը:

Հանձնաժողովը որոշեց.

1. Հաստատել համակարգի կողմից տրամադրված պայմանագր/եր/ի նախագ/ի/ծ/եր/ը,

2. Հանձնաժողովի քարտուղարին հանձնարարել պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը ընտրված ճանաչված մասնակիցներին համակարգի միջոցով ծանուցել պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ սահմանված ժամկետում պայմանագիրը չստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում մասնակիցը կզրկվի պայմանագիրը կնքելու իրավունքից՝ համաձայն Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Կողմ՝ 3, դեմ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Վ. Ֆարսյան ____________

*Հանձնաժողովի անդամ՝*

Հ. Գրիգորյան ____________

Դ. Բորյան ____________

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Վ. Էլոյան ____________